

ԲԱԳՐԱՏ ՎԱՐԳԱՊԵՏ ԳԷՈՐԳ — ԹԱԽԱՔԱԼԵԱՆ



Երկարատե հիւանդութիւնից յետոյ մայիսի 12-ին Բագրում կնքեց իր մահականացուն Ս. Էջմիածնի Սինօղի անդամ Բագրատ վարդապետ Գէորգ - Թաւաքալեանը, որի կորուստը ընդհանուր ցաւ պատճառեց թէ իր միաբանակից եղբայրներին և թէ նրա բազմաթիւ համակրողներին: Հանդուցեալը ծնունդ էր 1850 թուի մայիսի 15-ին Գերբէնտ քաղաքում. իր սկզբնական կրթութիւնն ստանալով անային ուսուցիչների ղեկավարութեամբ, տալա շարունակել է Թիֆլիսի ուսուցչական սեմինարիայում և Բագուի բէալական դպրոցում ուսանել, բայց եօթանասնական թւականներում կիսատ թողնելով իր ուսումը՝ մտել էր զինուորական ծառայութեան մէջ: Ռուս-տաճկական պատերազմից յետոյ, երբ բարձրացաւ Հայկական հարցը, հանդուցեալ Բագրատ վարդապետը, այն ժամանակ Աղէքսանդր Թաւաքալեան, թողնելով իր ծառայութիւնը, առաջիններից եղաւ, որ ուզեց կեանքի նպատակ դնել Տաճկահայաստանի վերածնութիւնը: Նա 1880 թուի դարնանը անցաւ Տաճկաստան, հասաւ Վան, և Ժողովրդի կեանքը, նրա բնաւորութիւնն ու ձգտումները ուսումնասիրելու համար պտտեց ամբողջ Մուշի շրջանը, օտքով կտրելով Վանից Կարին, այնտեղից Բագէշ, Մուշ և շն. մի տարի էլ Խարակոնիս դիւղում պարսպեց ուսուցչութեամբ: Այտեղ ենթարկվելով զանազան կասկածների, նա ստիպուած եղաւ իր մի ընկերոջ հետ Ալաշկերտի վրայով անցնել Ռուսաց սահմանը, 1883 թուի ձմեռը, հաստատ մտքումը դնելով նորից վերադառնալ այնտեղ և աշխատել Ժողովրդին առաջնորդելու դէպի լոյս և զիտութիւն: Սակայն նա չկարողացաւ շուտով իր նպատակն իրագործել



մօր մահուան պատճառով և ստիպուած եղաւ մնալ Բագ-  
 ւում ուսուցիչ հայոց նախկին ծխական դպրոցի: Երբ  
 1884 թուին փակուեցան հայոց դպրոցները, Թաւաքալեանը  
 աննպատակ համարելով իր Ռուսաստանում մնալը, աշխա-  
 տեց անցնել նորից Տաճկաստան: Հանգուցեալը իրրեւ խաղաղ  
 բնաւորութեան տէր անձն ընտրում էր իւր համար միշտ  
 խաղաղ դործունէութեան ասպարէզ. նրա ցանկութիւնն էր  
 ժողովրդին հասցնել ինքնաճանաչութեան՝ կանոնաւոր դպրոց-  
 ներ և դրադարաններ բանալով: Այդ նպատակով իսկ նա բա-  
 ւականաչափ զբբեր ժողովեց Ռուսաստանում 1886 թուին  
 և նպատակ դրաւ Մուշում բանալ մի կենտրոնական դրադա-  
 րան. սակայն մի քանի արգելառիթ հանգամանքներ թոյլ  
 չտուեցին նրան հեռու անցնել, և նա մնաց Ալաշկերտի սահ-  
 մաններում: Քիւնդեօրմազ գիւղում, որտեղից և հրաւիր-  
 վեցաւ Իգդիր, Հայոց վերաքաջուած երկսեռ դպրոցում ուս-  
 սայ լեզուի և Ռուսաստանի աշխարհագրութեան ուսուցիչ  
 լինելու: Երեք տարուայ ուսուցչութեան ընթացքում նա  
 գրաւեց թէ իւր ընկեր ուսուցիչներէ, և թէ հասարակու-  
 թեան մեծամասնութեան համակրութիւնը. նա կազմում էր  
 ուսուցչական խմբի և երիտասարդութեան կենտրոնը, դէ-  
 պի նա վերաբերվում էին ամէնքը ակնածութեամբ և դի-  
 մում էին նրա խորհուրդներին դժուար դէպքերում: Նա  
 ուսուցիչներին կապող օղակն էր, և այդ համերաշխ դործու-  
 նէութեան շնորհիւ էր, որ տասնեակ տարիներով կուսակ-  
 ցութիւնների պառակտուած երիտասարդները միացան, միա-  
 ցած ուժերով բաց արին դպրոցին կից դրադարանը և բա-  
 րեկամական յարաբերութիւններ սկսեցին իրար հետ: 1889  
 թուականին Իգդիրի ուսուցչական խումբը ցրվեց և Աղէք-  
 սանդը Թաւաքալեանը բաւական համարելով իր հանգստու-  
 թիւնը Ռուսաստանում, որոշեց նորից անցնել Տաճկահայաս-  
 տան և հաստատուիլ Ալաշկերտի Իւչքիլիսէ վանքում: Նոյն  
 թուի սեպտեմբերին անցաւ Իւչքիլիսէ և ձեռնադրուեց  
 վարդապետ՝ Բաղրատ անուամբ: Բայց անկարող եղաւ երկար  
 մնալ այնտեղ՝ զօհ դառնալով զանազան մասնութիւնների:  
 Բաղրատ վարդապետը թողեց Իւչքիլիսէն 1890 թուին, ան-



յաւ Ռուսաստան իր եղբայրների մօտ և մնաց մի ամբողջ տարի: Հանգուցեալ Երեմիա Կալիսկոպոսի տեղակալութեան ժամանակ, 1892 թուին, նա նշանակուեցաւ վանահայր Գերիկի ս. Աստուածածին վանքի և փոխանորդ Սալմաստի, ուր իր կարճ ժամանակուայ պաշտօնավարութեան միջոցին կարողացաւ գրաւել ժողովրդի սէրն ու համակրութիւնը: Այգիս Վեհափառ Հայրապետի հրամանաւ 1894-ին նա կանչուեց ս. Էջմիածին և հայկական կոտորածներից յետոյ, երբ մեծ թւով գաղթականներ թափուեցան Կարսի շրջանը, ուղարկուեց այնտեղ թշուառներին խնամելու. իսկ յետոյ կարգուեց նաև Կարսի փոխանորդ, բայց չուզեց մնալ այդ պաշտօնում՝ ցանկութիւն ունենալով գնալ դարձեալ իր վանքը, Գերիկ: 1896 թուի սեպտեմբերին նշանակուեց Աղէքսանդրապոլի փոխանորդ, որտեղ հանդամանքների շնորհիւ մնաց միայն 6 ամիս. ապա նոյն պաշտօնով փոխադրուեց Գանձակ, ուր մնաց մինչև 1900 թուականը: Թէ Աղէքսանդրապոլում և թէ Գանձակում հանգուցեալը իր խոհուն բնաւորութեամբ կարողացաւ մեծ համակրութիւն ձեռք բերել: 1900 թուի սեպտեմբերին նշանակուեց Թիֆլիսի կոնսիստորիայի նախանգամ և ս. Սարգսի վանահայր, իսկ 1901 թուի օգոստոսին հաստատուեց Աինօղի անդամ, ուր մնաց մինչև իր մահը: Հանգուցեալի ամբողջութիւնը իր աշխարհական ժամանակ քաշած չարքաշ կեանքի շնորհիւ քայքայուել էր. նրա յոգնած մարմինը երկար չկարողացաւ դիմանալ ծանր հիւանդութիւններին, և խիստ վաղաժամ իջաւ գերեզման:

Հանգուցեալ Բաղրատ վարդապետը հոգևոր կոչման միջմանելուց յետոյ իր ջանքեր ծառայութեանց համար վարձատրուած է եղել Հոգևոր բարձր իշխանութիւնից. 1894 թ. մարտի 8-ին ստացել է մասնաւոր վարդապետութեան աստիճան, 1895 թ. օգոստոս 30-ին ծաղկեայ փիլոն, 1896 թ. յունուարի 2-ին վարդապետական լանջախաչ: Հանգուցեալը չի թողել ոչ մի գրաւոր աշխատութիւն, մինչդեռ նա շատ լաւ ճանաչում էր թէ Տաճկահայաստանը և թէ այնտեղ գործողներին, այնպէս որ նա իր հետ անդարձ տարաւ ժա-



մանակակից պատմութեան համար անդնահատելի շատ աւելեկութիւններ:

Ս. Էջմիածնի միաբանութիւնը յանձին Բագրատ վարդապետի կորցրեց մի ճշմարիտ եկեղեցականի, մի կարեւոր ոյժ:

Հանդիստ, եղբայր, բազմաշարժար ոսկորներիդ. քօանունը գեռ երկար կ'իշուի քեզ սիրող և յարգող շրջաններում:



### Ս. ԵՂԻՆՅԻ ՎԱՆՔԸ ԲՈՒԶՈՎՆՈՒՄ.

Բագուից գէպի տրեւելք, մօտ 30 վերստաչափ հեռաւորութեան վրայ, Ափշերօնեան թերակղզու ավին տարածուում է Բուզովնա գիւղը:

Թէ ի՞նչ է նշանակում Բուզովնա բառը՝ դժուարանում ենք բացատրել, չըտնելով ոչ Պարսից բառարանում և ոչ մի ուրիշ տեղ այդ բառի ճշգրիտ բացատրութիւնը. հաւանաւոր են նա բազկացած է երկու բառից՝ բուզ—սառուց և ովգան—ջրհոր, սառը ջրհորներ ունեցող տեղ, որովհետեւ Բուզովնի ջրհորները յայտնի են ամբողջ շրջակայքում իրենց սառնութեամբ ու լաւ յատկութեամբ:

Գիւղի բնակիչները թաթեր են և խօսում են թաթերէն, իսկ եթէ հաւատալու լինինք մի աւանդութեան, որ գիւղի անունը եղել է Մաղրասայ կճշտուի այն ենթադրութիւնը, թէ Նամակու դաւառի Մաղրասա գիւղացիք այստեղից են գալթել գէպի հիւսիս:

Թէ ովքեր են եղել գիւղի նախնական բնակիչները՝ յայտնի չէ. նոյն իսկ Բագուայ նահանգի պատմիչ Եսայի Կաթուղիկոսը, որն այնքան յաճախ յիշում է Մաշտազա և Շուալան՝ Բագուայ խաների ամառանոցները, և նոցա շրջակայքում յաճախակի կրկնուող պատերազմները, միանգամայն չուում է Բուզովնի մասին, որը վերջիններիցս միմիայն երեք—չորս վերստ հեռաւորութիւն ունի: